ծառացած բոլոր խայտարղէտ ժողովուրդների։

Արաբական մի պատմութիւն եմ յիշում։—

Բեդուինը իր սքանչելի նժոյգը հեծած, սլանում էր անապատով, երբ ցնցոտիների մէջ կորած, փոշոտ ու ուժասպառ մի ճամբորդ տեսաւ։

— Գթութիւն, կոչեց օտարական թշուառը ձիաւորին, փրկի՛ր ինձ, տե՛ս, երեկոն ճօտ է, ընակութիւնը՝ հեռու։ ոտքով հասնել չեմ կարող։ ահա խաւարը կ՝իջնի ու գազանները կը յօշոտեն ինձ։ յանուն Ալլահի, օգնիր ինձ։

— Ի՞նչ ես ուզում,— հարցրեց Բեդուինը։

— Թամբիդ ա՛ռ ինձ, մրմնջաց օտարականը։ գթա՛, ուժասպառ եմ ու քայլելու անկարող։

Բեդուինը կարեկցեց։ վար իջաւ երիվարից, օգնեց ճամբորդին եւ նստեցրեց թամբին, եւ երբ պատրաստւում էր ինքն էլ հեծնել, օտարականը ասպանդակեց նժոյգը ու սլացաւ հեռու։ Բեդուինը այժմ միայն գլխի ընկաւ, որ այս նենգ յափշտակիչը իր հակառակորդն է ծպտեալ, որ վաղուց հետէ աչք էր դրել իր նժոյգին։ ու նա բոլոր ուժով ձայն տուեց յետեւից։

— Է՛յ, յանուն Ալլահի կանգ առ մի վայրկեան, դէթ խօսքս լսիր։

Աւազակը կանգ առաւ։

Հասկացայ ո՞վ ես, ասաց Բեդուինը, խօսք չունիմ, վարպետ եղար, պարտուած եմ։ բայց յանուն այն բոլոր թշուառների, որոնք այսուհետեւ անապատում կը մնան եւ գազաններին կուլ կը դառնան, որովհետեւ նրանց այլեւս ոչ ոք չի հաւատայ — յանուն բոլոր անճարներին ու խեղճերին, որոնց առջեւից այսուհետեւ ձիաւորները կ՝անցնին անդթօրէն՝ ե՛տ տուր ինձ իմ ձին։

Ցափշտակիչը մնաց մտածկոտ։ ապա ձին քշեց, առաջացաւ, տիրոջը յանձնեց, որպէսզի անապատում, հաւատը չի մեռնի...

Դաշնակիցները այս Բեդուինի առաքինութիւնը չունեցան։

Նրանք Հայաստանը զոհեցին քեմալիզմին։ եւ հաւատն սպանեցին աշխարհում։

Պատիժը չուշացաւ։

Արիւնահեղ կռիւ է գրեթէ բոլոր գաղթավայրերում։

Անհնարին է խողխողուած արդարութեան վրայ բախտ կառուցանել։

Այստեղ է Հայաստանի զօրութիւնը։

Այստեղ է ե՛ւ քեմալիզմի կործանումը։

Զարհուրելի կը լինէր կեանքը, եթէ իւրաքանչիւր ոճիր իր մէջ խակ չի պարունակէր իր անխուսափելի հատուցումը։

Նեմեզիդան — դունատ ու անողորմ — դարերի հետ է ընթանում անխօս ու սպառնալի։ նրա ոտնաձայնը ոչ ոք չի լսում, բայց նրա հարուածից ոչ ոք չի ազատւում։